ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» մարտի 2014թ. N------ -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Սիսակյան փողոցի հ.22 շենքի հ. 111՝ 73,9քմ. ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N15052013-01-0428 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Կարինե Մաիլյանին, Ալլա Սինանյանին, Արփենիկ Ավետիսյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

<<ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ քաղաքաշինության նախարարությունը՝ 14.03.2011թ. հ.01/13.1/899-11 գրությամբ ներկայացրել է 2011 թվականի դրությամբ Երևան քաղաքում առկա քանդման ենթակա վթարային բազմաբնակարան և հանրակացարանային շենքերի առաջնահերթության ցուցակը, որի համաձայն՝ Հալաբյան փողոցի հ.3 շենքի 3-րդ և 4-րդ մուտքերը համարվել են 4-րդ կարգի վթարային և քանդման ենթակա, ինչի պարագայում շենքում բնակվող ընտանիքները ենթակա են վերաբնակեցման Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի հ.682 որոշմամբ հաստատված կարգով:

Հալաբյան փողոցի հ.3 շենքի 4-րդ կարգի վթարային 3-րդ մուտքի հ.31 երեք սենյականոց բնակարանում՝ համաձայն Երևանի Աջափնյակ վարչական շրջանի <<Աջափնյակ-1>> համատիրության կողմից 29.04.2013թ. տրված հ.Ա1-13/089 և ՀՀ ոստիկանության Մաշտոցի շրջանի բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին 03.10.2013թ. հ.386534 տեղեկանքների՝ բնակվում են Կարինե Մաիլյանը՝ հաշվառված 1993թ., Ալլա Սինանյանը՝ հաշվառված 1991թ., Նարինե Մաիլյանը՝ հաշվառված 2001թ, Գարեգին Մարտիրոսյանը՝ հաշվառված 2001թ., Արփենիկ Ավետիսյանը՝ հաշվառված 1960թ:

Փաստորեն այս ընտանիքը 60-ական թվականներից բնակվում է վերը նշված հասցեում՝ վճարելով բոլոր անհրաժեշտ կոմունալ և սպասարկման վճարները, սակայն բնակարանի հատկացման վերաբերյալ իրավահաստատող փաստաթղթեր պահպանված չլինելու պատճառով, չեն կարողացել մասնավորեցնել բնակարանը:

Տվյալ բնակարանում հաշվառված Գարեգին Մարտիրոսյանը և Նարինե Մաիլյանը 09.10.2013թ. տրված լիազորագիր – համաձայնագրով՝ հրաժարվել են նոր բնակարան ստանալուց և հանձնում են բնակարանի նկատմամբ իրենց բոլոր իրավունքները ի օգուտ Կարինե Մաիլյանին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շենքը գտնվում է փլուզման եզրին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի հ.682 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հոդվածի դ) ենթակետի չափորոշիչներից ելնելով տվյալ ընտանիքին առաջարկվել է 2 սենյականոց բնակարան, սակայն վերջիններս չեն համաձայնվել՝ հայտնելով, որ իրենք համարվում են վարձակալ և իրենց պետք է հատկացվի վերը նշված որոշմամբ հաստատված 3-րդ հոդվածի ա) ենթակետի համաձայն՝ 3 սենյականոց բնակարան:

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Ելնելով Հալաբյան փողոցի հ.3 շենքի 3-րդ և 4-րդ մուտքերի շտապ քանդման անհրաժեշտությունից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին>> որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին>> որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ